

Հուլիսի 15-ին մարդաշատ էր Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու գավիթն ու բակը: Կիրակնօրյա Սուրբ պատարագի եկած ժողովուրդը միմյանց շնորհավորում էր Վարդավառի տոնի կապակցությամբ:

Հայոց ավանդական տոնակարգում Վարդավառն ամառային ամենամեծ տոնն է, որը գալիս է հազարամյակների խորքից: Նախաքրիստոնեական Հայաստանում այն կապվում էր սիրո եւ գեղեցկության դիցուհի Աստղիկի հետ: Քրիստոնեության ընդունումից հետո տոնը արտա քին փ
ոփոխության

է ենթարկվել, սակայն պահպանել է

իր

էությունը
:

Եկեղեցին

այն

փոխարինում

է Քրիստոսի

Այլակերպության

կամ

Պայծառակերպության

տոնով, որն, ը
ստ
Ավետ
արանի
տեղի
է
ունեցել
Թաբոր
լեռան
վրա:
.
Սա
եկեղեցական
5
տաղավար
տոներից
մեկն
է,
նշվում
է
մեծ
շուքով
եւ համարվում է
ընտանեկան
տոն:

Սակայն
նաև
այն
բնակավայրերում
,
որտեղ
Վարդավառը
հատուկ
չի

նշվում
,
պահպանվել է
ջրցանության
սովորույթը
,
որը
գալիս
է
դեռևս
հեթանոսական
ժամանակներից
:



Եվ ահա հավարտ կիրակնօրյա Սուրբ Պատարագի,, Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնի համակարգող Լեւոն Չիդիլյանը հայտարարեց «Վարդավառին» նվիրված տոնակատարության սկիզբը: Ու տարածվեց երգն ու երաժշտությունը, ուրախ պարն ու «Վարդավառին» հատուկ

ջրցանությունը: Ու ցողվում էր վարդավառյան ջուրը ահելի ու ջահելի, անցորդի ու մասնակցի վրա, բերելով ուրախություն եւ առաջացանելով ծիծաղ ու հրճվանք :

«Հայարտուն» մշակույթի կենտրոնի կազմակերպիչ Նարինե Ղուշչյանի, գեղարվեստական ղեկավար Պավել Օգանեզովի, համակարգող Լեւոն Չիդիլյանի եւ տեխնիկական պատասխանատու Վալերի Բադալյանի ջանքերով ավանդական Վարդավառը Վիրահայոց համայնքում դարձավ իրավամբ ժողովրդական ուրախության օր:

«Հայարտուն» մշակույթի կենտրոնի «Ներսես Շնորհալի» մանկա-պատանեկան համույթի (խմբավար Մարա Աբուլյան) սիրողական պարային խմբի (պարուսույց Նարինե Ղուշչյան), մենակատարներ Նինա Կարապետյանի, Անի Ղուշչյանի, Աննա Պողոսովայի, Հենրիխ Պետրոսյանի ժողովրդական երգի-պարի կատարումները ներդաշնակվում եւ խթանում էին ժողովրդական ուրախ տրամադրությունը: Իսկ ավանդական «Քոչարին» շուրջպարի մեջ էր առնում հանդիսատեսին:

Վարդավառը իսկական ժողովրդական տոնի վերածվեց Սամցխե-Ջավախքի նահանգի հայաբնակ շրջաններում՝ Ախալքալաքում, Նինոծմինդայում, Ախալցիխեում: Ախալ քալաքի Սբ. Խաչ եկեղեցում
Վիրահայոց Թեմի Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ մատուցված կիրակնօրյա Սուրբ Պատարագից հետո , սկսվեց վարդավառյան տոնն ու ամենուրեք տարածվեց
երգն ու պարը, ջրցանության ավանդական սովորությունը, ուրախություն եւ բարձր տրամադրություն ստեղծելով բնակչության շրջանում: